

Քաղաքաշինության բնագավառում օբյեկտների հետախուզման և հետազննման լիցենզիա ՔՊԼ 001469

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի Նիզամի փողոց 53/3 հասցեում գտնվող միահարկ
մասնաշենքի տեխնիկական վիճակի, հետագա շահագործման հնարավորության և
անհրաժեշտ միջոցառումների կիրառության վերաբերյալ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՔՊԼ-001469, 1-ին դաս

(սերիա, համար, դաս)

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՕՐՅԵԿՏՆԵՐԻ ՀԵՏԱԽՈՒԶՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՆԱՄԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄ

(նախագաղնիության քննադատում արժեքները տեսնել)

ՏՐԿԱԾ Է

2024-10-11, «ՍԵՅՄԱԷՔՍՊԵՐՏ» ՍՊԸ

(լիցենզիան տալու տարեթիվը՝ ամիսը, օրը, ընդամենը լիցենզիայի արժեքները և բնակության վայրը)

ՀՀ, ԵՐԵՎԱՆ, ԴԱՎԹԱՇԵՆ, Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆ Փ., 18, 56

(անվանումը՝ արդյուն, անհատ մեծանվանությամբ դնպատ՝ անունը, ազգանունը և բնակության վայրը)

Գործողության ժամկետը՝ 11.10.2029թ.

(օրը, ամիսը, տարեթիվը)

ՀԱՎԻՉ ՀԱՄԱՐ՝ UGIC-A56F-E8FE-F1C2

Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու
էլեկտրոնային բնօրինակի ներդրումը հնարավոր է իրականացնել <https://verify.e-gov.am> Հայաստանի Հանրապետության
պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում նույնպես իսկի
համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):

ԵՐԵՎԱՆ 2026



ԵԶՐԱԿԱԳՈՐԾՈՒՄ

ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի Նիզամի փողոց 53/3 հասցեում գտնվող միահարկ մասնաշենքի տեխնիկական վիճակի, հետագա շահագործման հնարավորության և անհրաժեշտ միջոցառումների կիրառության վերաբերյալ

Սույն եզրակացությունը տրվում է համաձայն «Սեյսմաէքսպերտ» ՍՊԸ-ի և «Պրոսպեկտ24» ՓԲԸ-ի միջև 12.05.2025թ. կնքված N Ս/05/25 պայմանագրի:


Եզրակացություն տալու նպատակով «Սեյսմաէքսպերտ» ՍՊԸ-ի կողմից (Օբյեկտների հետախուզման և հետազննման պետ. լիցենզիա թիվ ՔՊԼ-001469 տրված 11.10.2024թ.) կատարվել է ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի Նիզամի փողոց 53/3 հասցեում գտնվող միահարկ մասնաշենքի (այսուհետ՝ մասնաշենք) դիտողագործիքային հետազննություն, լուսանկարման և չափագրման աշխատանքներ:

Մասնաշենքի կոնստրուկտիվ լուծումների պարզաբանման և տեխնիկական վիճակի գնահատման նպատակով հետազննվել են պատերը, երկաթբետոնե (ե/բ) կոնստրուկցիաները, ծածկի ու վերնածածկի ե/բ սալերը, միջնորմները և այլ կոնստրուկտիվ տարրեր: Ուսումնասիրվել են կոնստրուկտիվ տարրերի վնասվածքների, ճաքերի, ձևախախտումների առկայությունը և դրանց տրվել են որակական ու քանակական գնահատականներ: Որոշվել են կոնստրուկտիվ տարրերի վնասվածության բնույթն ու աստիճանը: Մասնաշենքի կոնստրուկտիվ տարրերի վնասվածքների, ճաքերի, ձևախախտումների, թերությունների տեսքերը ֆիքսվել են լուսանկարներով, որոնց մի մասը ներկայացվել ու մեկնաբանվել են սույն եզրակացությունում:

1. Մասնաշենքի ծավալահատակագծային լուծումները.

ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի Նիզամի փողոց 53/3 հասցեում գտնվող միահարկ մասնաշենքը մեկ հարկանի, 3.1մ հարկի բարձրությամբ (հարկի բարձրություն է դիտվել հատակից մինչև ծածկի սալի վերին նիշը), 13.0x33.0մ եզրային առանցքաչափերի, ուղղանկյունաձև հատակագծով շինություն է (տես նկ. 1; 2): Այն

կառուցվել է 1990-ական թվականներին տեղադրված է համահարթեցված տեղանքում, առաջին հարկի հատակի նիշը բարձր է սալվածքից 10-30սմ-ով:



Նկ. 1 Մասնաշենքի տեղադիրքը ըստ Google map-ի



Նկ. 2 Մասնաշենքի ճակատների տեսքերը

2. Մասնաշենքի կոնստրուկտիվ լուծումները.

Մասնաշենքի կոնստրուկտիվ լուծումը խոշորապանելային է: Պատերի առանցքային հեռավորությունները լայնական ուղղությամբ կազմում են 5.5-2.2-5.5մ:

Մասնաշենքի կոնստրուկտիվ տարրերն ունեն հետևյալ բնութագրերը.

- Հիմքերը ժապավենային են, իրականացվել են միաձույլ ե/բ-ով:
- Կրող պատերն իրականացված են հավաքովի երկաթբետոնյա (ե/բ)

պանելներով:

- Ծածկն իրականացված է հավաքովի ե/բ բազմանցք սալերով:
- Միջնորմներն իրականացված են պեմզաբետոնյա մանրասալերից և բլոկներից:
- Տանիքը լանջավոր է, արտաքին կազմակերպված ջրահեռացմամբ:

Իրականացված է ծաղեղային ու կավարամածային կոնստրուկցիաներով և ծածկված է ազդեցիկության ալիքավոր թերթերով:

3. Մասնաշենքի ծավալահատակագծային և կոնստրուկտիվ լուծումների համապատասխանությունը գործող նորմատիվ փաստաթղթերի պահանջներին

Մասնաշենքի ծավալահատակագծային և կոնստրուկտիվ լուծումներում կան անհամապատասխանություններ ՀՀ ներկայումս գործող «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր» ՀՀՇՆ 20.04-2020 շիննորմերի պահանջներին: Դրանք են.

- Ծածկերի սալերի միջև կարանները չեն լցրել մանրահատիկ բետոնով կամ ցեմենտային ու պոլիմերցեմենտային շաղախով, ինչպես նախատեսված է նորմերի 96 կետով, ինչի հետևանքով չի ապահովվել հավաքովի ե/բ ծածկերի միաձուլությունը, ուստի ծածկերը չեն կարող ծառայել որպես հորիզոնական հարթության մեջ կոշտ և միաձույլ սկավառակներ և չեն կարող ապահովել կրող ուղղաձիգ կոնստրուկցիաների համատեղ աշխատանքը երկրաշարժային ազդեցությունների ժամանակ:

- Միջնորմների ամրակապումը կրող կոնստրուկցիաների հետ չի բավարարում նորմերի 6-րդ գլխով նախատեսված պահանջներին, և ապահովված չէ նրանց կայունությունը հարթությունից դուրս: Ըստ նորմերի 104-րդ կետի միջնորմները չպետք է մասնակցեն սեյսմիկ ուժերի ընկալմանը և դրա համար պետք է կրող տարրերին ամրացվեն ճկուն՝ շենքի երկու ուղղություններով, ապահովելով դրանց կայունությունը տապալման: Այս տեսանկյունից փաստացի կատարվել են միայն միջնորմների ամրակապման որոշակի միջոցառումներ, որոնք անբավարար են:

Փաստացի ապահովված չէ նաև նորմերի 104-րդ կետի պահանջը, այն է՝ միջնորմների և շենքի կրող կոնստրուկցիաների միջև չեն իրականացվել սեյսմիկ կարաններ, դրանց անջատ դեֆորմացումն ապահովելու համար:

4. Մասնաշենքի տեխնիկական վիճակի հետազննության արդյունքները և գնահատականը

4.1. Մասնաշենքի ակնադիտական հետազննության արդյունքում պարզվել է, որ մասնաշենքի կոնստրուկտիվ տարրերում կան տարբեր աստիճանի հետևյալ վնասվածքները, ճաքերը, ձևախախտումներն ու թերությունները:

- Առանձին տեղամասերում տանիքի ծածկույթի և ջրհորդանների տեխնիկական վիճակը անբավարար է: Վնասված տեղերից մթնոլորտային տեղումների ջրերը պարբերաբար և ինտենսիվ կերպով ներթափանցել են մասնաշենքի կոնստրուկտիվ տարրեր և տարբեր տեղերում առաջացրել տարբեր աստիճանի վնասվածքներ (տես նկ. 3):

- Տեղի է ունեցել ծածկի հավաքովի ե/բ սալերի միմյանց նկատմամբ թույլ կողաշարժ, ինչի հետևանքով սալերի միջև կարանների առաստաղի սվաղում առաջացել են մինչև 2մմ բացվածքի լայնությամբ ճաքեր (տես նկ. 4):

- Միջնորմներում կան 5-10մմ բացվածքի լայնությամբ տարբեր ուղղությունների միջանցիկ ճաքեր (տես նկ. 5): Միջնորմների ամրակապումը կրող կոնստրուկցիաների հետ անբավարար է, իսկ դրանց միացման կարանների սվաղին առկա են մինչև 15մմ բացվածքի լայնությամբ ճաքեր:

- Հատակների, դռների ու պատուհանների և ներքին հարդարանքի ընդհանուր մակերեսի մոտ 80 տոկոսի տեխնիկական վիճակն անբավարար է, մասամբ վթարային (տես նկ. 6):

- Մասնաշենքի առաջին հարկի հատակից մինչև 1.0մ բարձրությամբ հատվածամասերում պատերը գտնվում են գերխոնավ պայմաններում (տես նկ. 7): Պատերը խոնավացել են հետևյալ պատճառներով.

- Ինչպես հիմքերը, այնպես էլ պատերի գետնախարսխային մասերը չունեն ջրամեկուսիչ շերտ, ինչի հետևանքով գրունտում առկա խոնավությունը ներթափանցում է մասնաշենքի կոնստրուկտիվ տարրեր:

– Մասնաշենքը չի շահագործվում, տնական ժամանակ գտնվում է բաձիրթողի վիճակում և չի ապահովում բնական օդափոխություն:

- Մասնաշենքի սալվածքը գտնվում է անբավարար, մասամբ վթարային վիճակում, ինչի հետևանքով մթնոլորտային տեղումների և մակերևութային ջրերը ինտենսիվ կերպով ներթափանցում են հիմնատակ, ինչը կարող է պատճառ հանդիսանալ նստվածքային երևույթների (տես նկ. 8):



Նկ. 3 Տանիքից ներթափանցած մթնոլորտային տեղումների ջրերի ազդեցությունից առաջացած վնասվածքների տեսքերը



Նկ. 4 Ծածկի հարակից սալերի միջև կարանների լցափակումների թերությունների հետևանքով կարանների սվաղում առաջացած ճաքերի տեսքերը



Նկ. 5 Միջնորմների վնասվածքների տեսքերը



Նկ. 6 Դռների, պատուհանների, հատակների և ներքին հարդարման վնասվածքների տեսքերը



Նկ. 7 Պատերին խոնավացման տեսքերը



5. Մասնաշենքի ֆիզիկական մաշվածության աստիճանը

Մասնաշենքի ֆիզիկական մաշվածությունը որոշվել է ՀՀ ներկայումս գործող «Բնակելի, հասարակական և արտադրական շենքերի ու շինությունների տեխնիկական վիճակի հետազննության մեթոդական ցուցումների» համաձայն: Մասնաշենքի ընդհանուր ֆիզիկական մաշվածությունը որոշելու նպատակով նախ գնահատվել է մասնաշենքի առանձին կոնստրուկտիվ տարրերի ֆիզիկական մաշվածությունը, և այդ արդյունքների հիման վրա գնահատվել է մասնաշենքի ընդհանուր ֆիզիկական մաշվածությունը, որի արդյունքները բերված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

N/N ըստ հերթ	Շենքի տարրերի անվանումը	Տարրի հաշվային տեսակարար կշիռը Li	Տարրի ֆիզ. մաշվածութ. Փկի %	Տարրի ֆիզ. մաշվածության բաժինը շենքի ամբողջ ֆիզ. մաշվածութ. մեջ Փկի xLi %
1	2	3	4	5
1	Հիմքեր	0,090	10	0,90
2	Ե/բ կոնստրուկցիանե	0,060	20	1,20
3	Ծածկեր	0,040	30	1,20
4	Պատեր	0,310	20	6,20
5	Տանիք	0,035	80	2,80
6	Տանիքածածկ	0,030	90	2,70
7	Միջնորմներ	0,030	70	2,10
8	Հատակներ	0,080	70	5,60
9	Պատուհաններ	0,060	90	5,40
10	Դռներ	0,040	80	3,20
11	Հարդարման ծածկույթ	0,070	80	5,60
12	Ներքին տեխնիկական սարքավորումներ, այդ թվում			
	Ջեռուցում	0,017	90	1,53
	Սառը ջրամատակարարում	0,014	80	1,12
	Տաք ջրամատակարարում	0,005	90	0,45
	Կոյուղի	0,036	80	2,88
	Էլեկտրամատակարարում	0,011	80	0,88
	Գազամատակարարում	0,027	90	2,43
13	Այլ տարրեր			
	Սանդուղքներ	0,0243	60	1,46
	Մնացածը	0,0207	70	1,45
	Ընդամենը	1		49,097

Հաշվարկների արդյունքում ստացվել է, որ մասնաշենքի ֆիզիկական մաշվածությունը կազմում է 49,097%, որը կլորացնելով 1%-ի ճշտությամբ, ստանում ենք 49%, ինչը նշանակում է, որ ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարի «Բնակելի, հասարակական և արտադրական շենքերի ու շինությունների տեխնիկական վիճակի հետազոտման մեթոդական ցուցումների» 2-րդ աղյուսակի, մասնաշենքի տեխնիկական վիճակը դասվում է 2-րդ աստիճանի (բավարար), այն է՝ կոնստրուկտիվ տարրերն ընդհանրապես պիտանի են շահագործման համար, բայց պահանջում են որոշ կապիտալ նորոգում, որն ամենաանհրաժեշտն է տվյալ պահին:

Նշենք, որ ըստ նույն մեթոդական ցուցումների, երկրորդ աստիճանի ֆիզիկական մաշվածությունն ընկած է 21.0%-40.0% սահմաններում, երրորդ աստիճանը՝ 41.0%-60.0% սահմաններում, իսկ չորրորդ աստիճանը՝ 61.0%-85.0% սահմաններում:

6. Հիմնվելով հետազննության արդյունքներին եզրակացնում ենք

Հիմնվելով ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի Նիզամի փողոց 53/3 հասցեում գտնվող միահարկ մասնաշենքի հետազննության արդյունքներին եզրակացնում ենք.

- Առաջնորդվելով ՀՀ քաղաքաշինության նախարարի առ 08.12.2009թ. թիվ 282-Ն հրամանով հաստատված «Բնակելի, հասարակական և արտադրական շենքերի ու շինությունների տեխնիկական վիճակի հետազոտման մեթոդական ցուցումների» 2-րդ աղյուսակով, համապատասխան հաշվարկների արդյունքում մասնաշենքի ֆիզիկական մաշվածության տոկոսը կազմել է 49%:

- Ելնելով մասնաշենքի բազմամյա շահագործման ընթացքում առաջացած վնասվածքների բնույթից, չափերից ու ծավալներից, և առաջնորդվելով ՀՀ ներկայումս գործող «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր» ՀՀՇՆ 20.04-2020 շիննորմերի 24 աղյուսակի պահանջներով, մասնաշենքի վնասվածությունը գնահատվում է 2-րդ աստիճանի (վնասվածքի մակարդակը՝ կոնստրուկցիաների չափավոր վնասվածքներ):

- Համաձայն ՀՀ քաղաքաշինության նախարարի առ 08.12.2009թ. թիվ 282-Ն հրամանով հաստատված «Բնակելի, հասարակական և արտադրական շենքերի ու շինությունների տեխնիկական վիճակի հետազննության մեթոդական ցուցումների» 118 կետի՝ մասնաշենքի փաստացի տեխնիկական վիճակը՝ ֆիզիկական մաշվածության և վնասվածության աստճանի հետ համատեղ հաշվառմամբ գնահատվում է 3-րդ

աստիճան (անբավարար), այն է՝ կոնստրուկտիվ տարրերի շահագործումը հնարավոր է միայն կապիտալ նորոգումից հետո:

- Ելնելով մասնաշենքի գործառնական նշանակությունից ու կարևորության աստիճանից և առաջնորդվելով ՀՀ ներկայումս գործող «Շենքերի և կառուցվածքների վերակառուցում, վերականգնում և ուժեղացում. Հիմնական դրույթներ» ՀՀՇՆ 20-06-2014 նորմերով, մասնաշենքի հետագա անվտանգ շահագործման և նույն նպատակին ծառայեցնելու համար վերակառուցման նվազագույն թույլատրելի մակարդակն ընդունվում է «Սեյսմազինվածության բարձրացում»:

- «Սեյսմազինվածության բարձրացման» եղանակների ընտրության հիմքում պետք է լինի արդարացված ծախսերի ապահովումը:

Նշենք նաև, որ վերակառուցման «Սեյսմազինվածության բարձրացում» մակարդակը ձեռք է բերվում հետևյալ միջոցառումների կիրառմամբ.

- *կոնստրուկտիվ սխեմայի փոփոխում,*
- *մի շարք չվնասված կրող կոնստրուկցիաների ուժեղացում,*
- *ծածկերի իրենց հարթության մեջ կոշտության մեծացում,*
- *սեյսմապաշտպանության հատուկ համակարգերի կիրառում և այլն:*

Համաձայն «Շենքերի և կառուցվածքների վերակառուցում, վերականգնում և ուժեղացում. հիմնական դրույթներ» ՀՀՇՆ 20-06-2014 նորմերի 6-րդ կետի՝ ***օբյեկտի վերակառուցման նպատակն ու մակարդակը և հետագա շահագործման նախանշվող ժամկետը որոշում է պատվիրատուն:***

7. Առաջարկություններ

Ելնելով ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի Նիզամի փողոց 53/3 հասցեում գտնվող միահարկ մասնաշենքի ծավալահատակագծային և կոնստրուկտիվ լուծումների առանձնահատկություններից, փաստացի տեխնիկական վիճակից, ֆիզիկական մաշվածության և վնասվածության աստիճաններից, շահագործման ժամկետից, և հաշվի առնելով այն հանգամանքը, որ մասնաշենքը նախագծվել ու կառուցվել է 7-8 բալ սեյսմակայունության հաշվարկով, իսկ ըստ ՀՀ ներկայումս գործող ՀՀՇՆ 20.04-2020 նորմերի Հայաստանի Հանրապետության տարածքի սեյսմիկ գոտիացման (շրջանացման) քարտեզի Վանաձոր քաղաքի տարածքը գտնվում է սեյսմիկ երրորդ գոտում՝ գետնի սպասվելիք առավելագույն $a_{max}=0.5g$ արագացումով, առաջարկվում է

մասնաշենքի «Մեյսմագինվածության բարձրացումն» իրականացնել հետևյալ միջոցառումների կատարմամբ.

- Միջհարկային ծածկերի ու վերնածածկի սալերի վրա իրականացնել երկաթբետոնե վրաշերտ, ծածկերի սալերի միմյանց հետ միաձուլումն ապահովելու և հորիզոնական հարթության մեջ աշխատող կոշտ սկավառակներ ստանալու նպատակով:

- Իրականացնել միջնորմների ամրակապումը մասնաշենքի կրող կոնստրուկտիվ տարրերի հետ, այնպես, որ դրանք բավարարեն ՀՀՇՆ 20.04-2020 նորմերի պահանջներին:

Բացի «Մեյսմագինվածության բարձրացման» նպատակով նախատեսվող շինարարական աշխատանքներից պետք է վերացնել նաև մասնաշենքի կոնստրուկտիվ տարրերի բոլոր այն վնասվածքներն ու թերությունները, որոնք նշված են սույն եզրակացությունում, մասնավորապես.

- Հիմնովին փոխարինել նորերով հատակները, դռներն ու պատուհանները (որոնք դեռևս չեն փոխարինվել), քանի որ, բացի նրանից որ դրանց զգալի մասի տեխնիկական վիճակն անբավարար է կամ վթարային, դրանք նաև չեն համապատասխանում ժամանակակից պահանջներին՝ բարոյապես մաշված են համարվում:

- Հիմքերը և պատերի գետնախարսխային մասերը հետագա խոնավացումից պաշտպանելու համար, նախատեսել դրանց ջրամեկուսիչ շերտի իրականացում:

- Վերանորոգել սալվածքը և կազմակերպել մթնոլորտային տեղումների ու մակերևույթային ջրերի հեռացումը մասնաշենքից՝ բացառելով ջրերի ներթափանցումը կոնստրուկտիվ տարրեր և հիմնատակ:

Մեյսմագինվածության բարձրացման նպատակով նախատեսվող բոլոր աշխատանքները պետք է կատարվեն սահմանված կարգով մշակված և հաստատված նախագծի հիման վրա:

Կատարող՝

Փորձագետ



Աշոտ Սիմոնյան

Քաղաքաշինության բնագավառում օբյեկտների հետախուզման և հետազննման լիցենզիա ՔՊԼ 001469

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի Նիզամի փողոց 53/3 հասցեում գտնվող երկհարկանի մասնաշենքերի տեխնիկական վիճակի, հետագա շահագործման հնարավորության և անհրաժեշտ միջոցառումների կիրառության վերաբերյալ


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ
ԼԻՑԵՆԶԻԱ
ՔՊԼ-001469, 1-ին դաս
(մեխան, համալը, դասը)
ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՕՐՑԵԿՏԵՐԻ ՀԵՏԱԽՈՒԶՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՆԱՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄ
(ընդլայնվողության ընդգրկումով գործունեության տեսակը)
ՏՐՎԱԾ Է
2024-10-11, «ՍԵՑՍՄԱԷՔՍՊԵՐՏ» ՍՊԸ
(վերջին օրվան ստորագրողի անունը և ֆունկցիան, որի ներքո կատարվել է ստորագրումը)
ՀՀ, ԵՐԵՎԱՆ, ԴԱՎԹԱՆԵՆ, Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆ Փ., 18, 56
(մեխանիկական օբյեկտի անվանումը, հասցեն, հեռախոսային համարը, փոստային և էլեկտրոնային փոստային հասցեները)
Գործողության ժամկետը՝ 11.10.2029թ.
(թվեր, ամիս, տարեթիվ)

ՀԱՎԻԶ ՀԱՄԱՐ՝ UGIC-A56F-E8FE-F1C2 Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային ընդլայնվող և ընդլայնվող ինստիտուտի կողմից հաստատվող է իրականացվել https://verify.e-gov.am Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով իսկից համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):

ԵՐԵՎԱՆ 2026

«Հաստատում եմ»

«Սեյսմաէքսպերտ» ՍՊԸ տնօրեն՝

S. Բաբայան

« 13 » 05 2026թ.



ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի Նիզամի փողոց 53/3 հասցեում գտնվող երկհարկանի մասնաշենքերի տեխնիկական վիճակի, հետագա շահագործման հնարավորության և անհրաժեշտ միջոցառումների կիրառության վերաբերյալ


Սույն եզրակացությունը տրվում է համաձայն «Սեյսմաէքսպերտ» ՍՊԸ-ի և «Պրոսպեկտ24» ՓԲԸ-ի միջև 12.05.2025թ. կնքված N Ս/05/25 պայմանագրի:

Եզրակացություն տալու նպատակով «Սեյսմաէքսպերտ» ՍՊԸ-ի կողմից (Օբյեկտների հետախուզման և հետազննման պետ. լիցենզիա թիվ ՔՊԼ-001469 տրված 11.10.2024թ.) կատարվել է ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի Նիզամի փողոց 53/3 հասցեում գտնվող երկհարկանի մասնաշենքերի տեխնիկական վիճակի, հետագա շահագործման հնարավորության և անհրաժեշտ միջոցառումների կիրառության վերաբերյալ (այսուհետ մասնաշենքեր) դիտողագործիքային հետազննություն, լուսանկարման և չափագրման աշխատանքներ:

Մասնաշենքերի կոնստրուկտիվ լուծումների պարզաբանման և տեխնիկական վիճակի գնահատման նպատակով հետազննվել են պատերը, երկաթբետոնե (ե/բ) կոնստրուկցիաները, ծածկի ու վերնածածկի ե/բ սալերը, միջնորմները և այլ կոնստրուկտիվ տարրեր: Ուսումնասիրվել են կոնստրուկտիվ տարրերի վնասվածքների, ճաքերի, ձևախախտումների առկայությունը և դրանց տրվել են որակական ու քանակական գնահատականներ: Որոշվել են կոնստրուկտիվ տարրերի վնասվածության բնույթն ու աստիճանը: Մասնաշենքերի կոնստրուկտիվ տարրերի վնասվածքների, ճաքերի, ձևախախտումների, թերությունների տեսքերը ֆիքսվել են լուսանկարներով, որոնց մի մասը ներկայացվել ու մեկնաբանվել են սույն եզրակացությունում:

1. Մասնաշենքերի ծավալահատակագծային լուծումները.

ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի Նիզամի փողոց 53/3 հասցեում գտնվող երկհարկանի մասնաշենքերը երկու հարկանի, բարդ հատակագծով շինություններ են, որոնք բաժանված են միմյանցից դեֆորմացիոն նստվածքային կարանով (տես նկ. 1; 2): Դրանք կառուցվել են 1960-ական և 1980-ական թվականներին և իրենցից ներկայացնում են յունաքանյուրը երկու առանձին կոնստրուկցաներով հատվածամասեր: Մասնաշենքերը տեղադրված են թեք տեղանքում, առաջին հարկերի հատակների նիշերը բարձր են տեղանքի համահարթեցման նիշից 10-220սմ-ով: Մասնաշենքերի հարկներն ունեն 3.2մ հարկի բարձրություն (հարկի բարձրություն է դիտվել հատակից մինչև ծածկի սալի վերին նիշը):



Նկ. 1 Մասնաշենքերի տեղադիրքը ըստ Google map-ի





Նկ. 2 Մասնաշենքերի ճակատների տեսքերը

2. Մասնաշենքերի կոնստրուկտիվ լուծումները.

Մասնաշենքերի կոնստրուկտիվ լուծումը տրված է կրող և կապող երկայնական ու լայնական պատերով և միջհարկային ծածկերի ու վերնածածկի հորիզոնական սկավառակներով:

Մասնաշենքերի կոնստրուկտիվ տարրերն ունեն հետևյալ բնութագրերը.

- Հիմքերը ժապավենային են, իրականացվել են խամքարաբետոնով:
- Յուրաքանչյուր մասնաշենքերի 6.0x10.4մ հատվածամասերի պատերն իրականացվել են տուֆաքարերի «Միդիս» տիպի շարվածքով, կրացեմենտավազային շաղախի կիրառմամբ և ունեն 50-55սմ հաստություն: Պատերի դրսի երեսաշարը սրբատաշ է: Մյուս հատվածամասերի պատերն իրականացված են փայտյա կոնստրուկցիաներով:

• 6.0x10.4մ չափերով հատվածամասի միջհարկային ծածկերն ու վերնածածկը իրականացվել են հավաքովի երկաթբետոնե կլորանցքավոր սալերով, իսկ մյուս հատվածամասերում ծածկերն իրականացված են փայտյա կոնստրուկցիաներով:

- Սանդղուղքներն իրականացվել են փայտյա կոնստրուկցիաներով:
- Միջնորմներն իրականացվել են պեմզաբետոնե սալերի, պեմզաբետոնե բլոկների շարվածքով, մասամբ փայտյա կոնստրուկցիաներով:

• Տանիքը լանջավոր է, արտաքին կազմակերպված ջրահեռացմամբ, իրականացվել են փայտյա ծալեղային ու կավարամածային կոնստրուկցիաներով և ծածկված է ագրոշիֆերյա ալիքավոր թերթերի ծածկույթով:

- Սալվածքը բետոնից է:

3. Մասնաշենքերի ծավալահատակագծային և կոնստրուկտիվ լուծումների համապատասխանությունը գործող նորմատիվ փաստաթղթերի պահանջներին

Մասնաշենքերը նախագծվել ու կառուցվել են մինչև Սպիտակի 1988թ. երկրաշարժը, ուստի ակնհայտ է, որ նրա ծավալահատակագծային և կոնստրուկտիվ լուծումներում կան անհամապատասխանություններ ՀՀ ներկայումս գործող «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր» ՀՀՇՆ 20.04-2020 շիննորմերի պահանջներին: Դրանք են.

- Պատերի շարվածքի փաստացի կոնստրուկտիվ լուծումները (տիպերը), ըստ սեյսմիկ ուժերի դիմադրողականության, չեն համապատասխանում նորմերի աղյուսակ 12-ով նախատեսված պահանջներին:

- Մասնաշենքերի լայնական պատերի միջև առավելագույն հեռավորությունները գերազանցում է նորմի 126 կետի 13-րդ աղյուսակով սահմանված արժեքները:

- Մասնաշենքերի պարփակող պատերում բազմաթիվ միջնապատերի լայնությունը, պատուհանների բացվածքների լայնությունը, ինչպես նաև միջնապատերի և նրանց կից բացվածքների լայնության հարաբերությունները չեն համապատասխանում նորմերի 14-րդ աղյուսակով նախատեսված թույլատրելի արժեքներին:

- Ծածկերի սալերի միջև կարանները չեն լցրել մանրահատիկ բետոնով կամ ցեմենտային ու պոլիմերցեմենտային շաղախով, ինչպես նախատեսված է նորմերի 96 կետով, ինչի հետևանքով չի ապահովվել հավաքովի ե/բ ծածկերի միաձուլությունը, ուստի ծածկերը չեն կարող ծառայել որպես հորիզոնական հարթության մեջ կոշտ և միաձույլ սկավառակներ և չեն կարող ապահովել կրող ուղղաձիգ կոնստրուկցիաների համատեղ աշխատանքը երկրաշարժային ազդեցությունների ժամանակ:

- Միջնորմների ամրակապումը կրող կոնստրուկցիաների հետ չի բավարարում նորմերի 6-րդ գլխով նախատեսված պահանջներին, և ապահովված չէ նրանց կայունությունը հարթությունից դուրս: Ըստ նորմերի 104-րդ կետի միջնորմները չպետք է մասնակցեն սեյսմիկ ուժերի ընկալմանը և դրա համար պետք է կրող տարրերին ամրացվեն ճկուն՝ մասնաշենքերի երկու ուղղություններով, ապահովելով դրանց կայունությունը տապալման: Այս տեսանկյունից փաստացի կատարվել են միայն միջնորմների ամրակապման որոշակի միջոցառումներ, որոնք անբավարար են:

Փաստացի ապահովված չէ նաև նորմերի 104-րդ կետի պահանջը, այն է՝ միջնորմների և մասնաշենքերի կրող կոնստրուկցիաների միջև չեն իրականացվել սեյսմիկ կարաններ, դրանց անջատ դեֆորմացումն ապահովելու համար:

4. Մասնաշենքերի տեխնիկական վիճակի հետազննության արդյունքները և գնահատականը

4.1. Համաձայն տարբեր կոնստրուկտիվ լուծումներով բնակելի, հասարակական, արտադրական, տրանսպորտային, հիդրոտեխնոլոգիական շինությունների, ինչպես նաև պատմաճարտարապետական հուշարձանների վրա Սպիտակի երկրաշարժի հետևանքների ինժինեռական վերլուծությունների համալիր արդյունքների հիման վրա կազմված իզոսեյստերի քարտեզի, Լոռու մարզի Վանաձոր քաղաքի տարածքում երկրաշարժի ինտենսիվությունը գնահատվել է մինչև 9-10 բալ (տես նկ. 3): Մանանակում է, որ շահագործման ընթացքում մասնաշենքն իր վրա կրել է նաև հաշվարկայինից բարձր ուժգնության երկրաշարժի ազդեցություն:

4.2. Մասնաշենքերի ակնադիտական հետազննության արդյունքում պարզվել է, որ մասնաշենքերի կոնստրուկտիվ տարրերում կան տարբեր աստիճանի հետևյալ վնասվածքները, ճաքերը, ձևախախտումներն ու թերությունները:

- Տանիքի ծածկույթի և ջրհորդանների տեխնիկական վիճակը անբավարար է, մասամբ վթարային: Վնասված տեղերից մթնոլորտային տեղումների ջրերը պարբերաբար և ինտենսիվ կերպով ներթափանցել են մասնաշենքերի կոնստրուկտիվ տարրեր և տարբեր տեղերում առաջացրել տարբեր աստիճանի վնասվածքներ (տես նկ. 4):

- Պատերին կան զգալի, մասամբ ուժեղ վնասվածքներ: Պատերում կան մինչև 4մ բացվածքի լայնությամբ ուղղաձիգ ճաքեր, առանձին հատվածամասերում պատերը խալիվել են և տեղի են ունեցել քարերի թափում (տես նկ. 5):

Պատերում առկա վերոհիշյալ վնասվածքներն առաջացել են շինարարական աշխատանքների թերությունների և քարաշարվածքի պարբերաբար խոնավացման հետևանքով, իսկ խոնավացման պատճառ են հանդիսացել հետևյալ հանգամանքները.

- Տանիքի ծածկույթի և ջրհորդանների ու ջրահեռացման խողովակների անբավարար տեխնիկական վիճակի պատճառով մթնոլորտային տեղումների ջրերը թափվել են պատերին:

– Ինչպես հիմքերը, այնպես էլ պատերի գետնախարսխային մասերը չունեն ուղղաձիգ ջրամեկուսիչ շերտ, և պատերի պատվանդանային մասերի վրա չի իրականացվել նաև հորիզոնական ջրամեկուսիչ շերտ, ինչի հետևանքով գրունտում առկա խոնավությունը որպես կապիլյար ջրեր ներթափանցում են քարաշարվածք:

- Տեղի է ունեցել ծածկի հավաքովի ե/բ սալերի միմյանց նկատմամբ զգալի կողաշարժ, ինչի հետևանքով սալերի միջև կարանների առաստաղի սվաղում առաջացել են մինչև 3մմ բացվածքի լայնությամբ ճաքեր (տես նկ. 6): Փայտյա հատվածամասերով ծածկերն ուժեղ վնասվել են, ծածկերի փայտյա կոնստրուկցիաներն ունեն զգալի ճոճունություն և դրանք ենթարկվել են կենսաբանական վնասվածքների (փտել են) (տես նկ. 7):

- Միջնորմներում կան 5-10մմ բացվածքի լայնությամբ տարբեր ուղղությունների միջանցիկ ճաքեր (տես նկ. 8): Միջնորմների ամրակապումը կրող կոնստրուկցիաների հետ անբավարար է, իսկ դրանց միացման կարանների սվաղին առկա են մինչև 15մմ բացվածքի լայնությամբ ճաքեր:

- Հատակների, դռների ու պատուհանների և ներքին հարդարանքի ընդհանուր մակերեսի մոտ 80 տոկոսի տեխնիկական վիճակն անբավարար է, մասամբ վթարային (տես նկ. 9):

- Մասնաշենքերը միմյանցից բաժանված է դեֆորմացիոն կարանով, սակայն այդ կարանը լցափակված է բետոնով կամ այլ կոշտ շինանյութերով, որոնք երկրաշարժային ազդեցությունների ժամանակ խոչընդոտում են հատվածամասի՝ որպես առանձին կառույցների ազատ տատանմանը:


- Շենքի առաջին հարկի հատակից մինչև 1.0մ բարձրությամբ հատվածամասերում պատերը գտնվում են գերխոնավ պայմաններում (տես նկ. 10): Պատերը խոնավացել է հետևյալ պատճառներով.

– Ինչպես հիմքերը, այնպես էլ պատերի գետնախարսխային մասերը չունեն ջրամեկուսիչ շերտ, ինչի հետևանքով գրունտում առկա խոնավությունը ներթափանցում է մասնաշենքերի կոնստրուկտիվ տարրեր:

– Մասնաշենքերը չեն շահագործվում, տևական ժամանակ գտնվում են բաժիթողի վիճակում և չի ապահովվում բնական օդափոխություն:

- Մասնաշենքերի սալվածքը գտնվում է անբավարար, մասամբ վթարային վիճակում, ինչի հետևանքով մթնոլորտային տեղումների և մակերևութային ջրերը

ինտենսիվ կերպով ներթափանցում են հիմնատակ, ինչը կարող է պատճառ հանդիսանալ նստվածքային երևույթների (տես նկ. 11):



Նկ. 3 Սպիտակի երկրաշարժի իզոսեյստերի քարտեզը ըստ Ա. Ավանեսյանի (ՄՊԱԾ)



Նկ. 4 Տանիքից ներթափանցած մթնոլորտային տեղումների ջրերի ազդեցությունից առաջացած վնասվածքների տեսքերը



Նկ. 5 Պատերին առկա վնասվածքների տեսքերը



Նկ. 6 Տանիքից ներթափանցած մթնոլորտային տեղումների ջրերի ազդեցությունից առաջացած վնասվածքների տեսքերը



Նկ. 7 Տանիքից ներթափանցած մթնոլորտային տեղումների ջրերի ազդեցությունից առաջացած վնասվածքների տեսքերը



Նկ. 8 Միջնորմների վնասվածքների տեսքերը



Նկ. 9 Հատակների, դռների ու պատուհանների և ներքին հարդարման վնասվածքների տեսքերը



Նկ. 10 Պատերին խոնավածման տեսքերը



Նկ. 11 Սալվածքի վնասվածքների տեսքերը

5. Մասնաշենքերի ֆիզիկական մաշվածության աստիճանը

Մասնաշենքերի ֆիզիկական մաշվածությունը որոշվել է ՀՀ ներկայումս գործող «Բնակելի, հասարակական և արտադրական շենքերի ու շինությունների տեխնիկական վիճակի հետազննության մեթոդական ցուցումների» համաձայն: Մասնաշենքերի ընդհանուր ֆիզիկական մաշվածությունը որոշելու նպատակով նախ գնահատվել է մասնաշենքերի առանձին կոնստրուկտիվ տարրերի ֆիզիկական մաշվածությունը, և այդ արդյունքների հիման վրա գնահատվել է մասնաշենքերի ընդհանուր ֆիզիկական մաշվածությունը, որի արդյունքները բերված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

N/N ըստ հերթ	Շենքի տարրերի անվանումը	Տարրի հաշվային տեսակարար կշիռը Li	Տարրի ֆիզ. մաշվածութ. Փկի %	Տարրի ֆիզ. մաշվածության բաժինը շենքի ամբողջ ֆիզ. մաշվածութ. մեջ Փկի xLi %
1	2	3	4	5
1	Հիմքեր	0,090	20	1,80
2	փայտյա կոնստրուկցիանե	0,060	40	2,40
3	Ծածկեր	0,040	40	1,60
4	Պատեր	0,310	30	9,30
5	Տանիք	0,035	80	2,80
6	Տանիքածածկ	0,030	90	2,70
7	Միջնորմներ	0,030	70	2,10
8	Հատակներ	0,080	70	5,60
9	Պատուհաններ	0,060	90	5,40
10	Դռներ	0,040	80	3,20
11	Հարդարման ծածկույթ	0,070	80	5,60
12	Ներքին տեխնիկական սարքավորումներ, այդ թվում			
	Ջեռուցում	0,017	90	1,53
	Սառը ջրամատակարարում	0,014	80	1,12
	Տաք ջրամատակարարում	0,005	90	0,45
	Կոյուղի	0,036	80	2,88
	Էլեկտրամատակարարում	0,011	80	0,88
	Գազամատակարարում	0,027	90	2,43
13	Այլ տարրեր			
	Սանդուղքներ	0,0243	60	1,46
	Մնացածը	0,0207	70	1,45
	Ընդամենը	1		54,697

Հաշվարկների արդյունքում ստացվել է, որ մասնաշենքերի ֆիզիկական մաշվածությունը կազմում է 54,697%, որը կլորացնելով 1%-ի ճշտությամբ, ստանում ենք

55%, ինչը նշանակում է, որ ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարի «Բնակելի, հասարակական և արտադրական շենքերի ու շինությունների տեխնիկական վիճակի հետազոտման մեթոդական ցուցումների» 2-րդ աղյուսակի, մասնաշենքերի տեխնիկական վիճակը դասվում է 2-րդ աստիճանի (բավարար), այն է՝ կոնստրուկտիվ տարրերն ընդհանրապես պիտանի են շահագործման համար, բայց պահանջում են որոշ կապիտալ նորոգում, որն ամենաանհրաժեշտն է տվյալ պահին:

Նշենք, որ ըստ նույն մեթոդական ցուցումների, երկրորդ աստիճանի ֆիզիկական մաշվածությունն ընկած է $21.0\% \div 40.0\%$ սահմաններում, երրորդ աստիճանը՝ $41.0\% \div 60.0\%$ սահմաններում, իսկ չորրորդ աստիճանը՝ $61.0\% \div 85.0\%$ սահմաններում: Սա նշանակում է, որ մասնաշենքերի ֆիզիկական մաշվածությունը՝ 55%, գտնվում է երրորդ աստիճանի ամենավերին շեմում և մոտ է չորրորդ աստիճանին:

6. Հիմնվելով հետազննության արդյունքներին՝ եզրակացնում ենք

Հիմնվելով ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի Նիզամի փողոց 53/3 հասցեում գտնվող երկհարկանի մասնաշենքերի հետազննության արդյունքներին եզրակացնում ենք.

- Առաջնորդվելով ՀՀ քաղաքաշինության նախարարի առ 08.12.2009թ. թիվ 282-Ն հրամանով հաստատված «Բնակելի, հասարակական և արտադրական շենքերի ու շինությունների տեխնիկական վիճակի հետազոտման մեթոդական ցուցումների» 2-րդ աղյուսակով, համապատասխան հաշվարկների արդյունքում մասնաշենքերի ֆիզիկական մաշվածության տոկոսը կազմել է 55%:

- Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սպիտակի 1988թ. երկրաշարժից մասնաշենքերն իրենց վրա կրել է հաշվարկայինից բարձր ուժգնության սեյսմիկ ազդեցություն, և ելնելով մասնաշենքերում առկա սեյսմիկ բնույթի վնասվածքներ փաստացի չափերից, ինչպես նաև առաջնորդվելով ՀՀ ներկայումս գործող «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր» ՀՀՇՆ 20.04-2020 շիննորմերի 24 աղյուսակի պահանջներով, մասնաշենքերի վնասվածությունը գնահատվում է 3-րդ աստիճանի (վնասվածքի մակարդակը՝ կոնստրուկցիաների զգալի վնասվածքներ):

- Համաձայն ՀՀ քաղաքաշինության նախարարի առ 08.12.2009թ. թիվ 282-Ն հրամանով հաստատված «Բնակելի, հասարակական և արտադրական շենքերի ու

շինությունների տեխնիկական վիճակի հետազննության մեթոդական ցուցումների» 118 կետի՝ մասնաշենքերի փաստացի տեխնիկական վիճակը՝ ֆիզիկական մաշվածության և վնասվածության աստճանի հետ համատեղ հաշվառմամբ գնահատվում է 3-րդ աստիճան (անբավարար), այն է՝ կոնստրուկտիվ տարրերի շահագործումը հնարավոր է միայն կապիտալ նորոգումից հետո:

- Համաձայն ՀՀ ներկայումս գործող «Շենքերի և կառուցվածքների վերակառուցում, վերականգնում և ուժեղացում. Հիմնական դրույթներ» ՀՀՇՆ 20-06-2014 նորմերի դրույթների, ելնելով տվյալ մասնաշենքերի գործառնական նշանակությունից և կարևորության աստիճանից, մասնաշենքերի հետագա անվտանգ շահագործման և նույն նպատակին ծառայեցնելու համար վերակառուցման նվազագույն թույլատրելի մակարդակն ընդունվում է «Մեյսմազինվածության բարձրացում»:

- Մասնաշենքերի «Մեյսմազինվածության բարձրացման» նպատակով նախատեսվող բոլոր վերակառուցողական աշխատանքները պետք է կատարվեն սահմանված կարգով մշակված և հաստատված նախագծի հիման վրա: Նախագիծը մշակելուց առաջ պետք է ուսումնասիրել մասնաշենքերի հիմնատակի գրունտը, համապատասխան ակտով վկայագրել այն և անհրաժեշտության դեպքում նախագծում նախատեսել համապատասխան միջոցառումներ:

- «Մեյսմազինվածության բարձրացման» եղանակների ընտրության հիմքում պետք է լինի արդարացված ծախսերի ապահովումը:

Նշենք նաև, որ վերակառուցման «Մեյսմազինվածության բարձրացում» մակարդակը ձեռք է բերվում հետևյալ միջոցառումների կիրառմամբ.

- *կոնստրուկտիվ սխեմայի փոփոխում,*
- *մի շարք չվնասված կրող կոնստրուկցիաների ուժեղացում,*
- *ծածկերի իրենց հարթության մեջ կոշտության մեծացում,*
- *սեյսմապաշտպանության հատուկ համակարգերի կիրառում և այլն:*

Համաձայն «Շենքերի և կառուցվածքների վերակառուցում, վերականգնում և ուժեղացում. հիմնական դրույթներ» ՀՀՇՆ 20-06-2014 նորմերի 6-րդ կետի՝ ***օբյեկտի վերակառուցման նպատակն ու մակարդակը և հետագա շահագործման նախանշվող ժամկետը որոշում է պատվիրատուն:***

Ելնելով ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի Նիզամի փողոց 53/3 հասցեում գտնվող երկհարկանի մասնաշենքերի ծավալահատակագծային և կոնստրուկտիվ

լուծումների առանձնահատկություններից, փաստացի տեխնիկական վիճակից, շահագործման ժամկետից, և հաշվի առնելով այն հանգամանքը, որ մասնաշենքերը նախագծվել ու կառուցվել է 7-8 բալ սեյսմակայունության հաշվարկով, իսկ ըստ ՀՀ ներկայումս գործող ՀՀՇՆ 20.04-2020 նորմերի ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիացման (շրջանացման) քարտեզի Վանաձոր քաղաքի տարածքը գտնվում է սեյսմիկ երրորդ գոտում՝ գետնի սպասվելիք առավելագույն $a_{max}=0.5g$ արագացումով, գտնում ենք, որ «Սեյսմազինվածության բարձրացման» աշխատանքների ծախսերը կգերազանցեն համապատասխան տեխնիկատնտեսական արդարացված ծախսերից, ուստի ավելի նպատակահարմար է դրա ապամոնիտաժումը և նորի կառուցումը:

- Ապամոնիտաժման նպատակով նախատեսվող բոլոր աշխատանքները պետք է կատարվեն սահմանված կարգով մշակված և հաստատված նախագծի հիման վրա:

- Ապամոնիտաժում իրականացնելուց առաջ պետք է մշակել «աշխատանքների կազմակերպման նախագիծ» (ΠΟС):

Կատարող՝

Փոքձագետ



Աշոտ Սիմոնյան